

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Սովորական գործառնություններ)

(Դիմակայուն եւ ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ

ՄԻՋԵՎ

ԱՄՍԱԹԻՎ _____

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

_____ ով թվագրված ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջեւ:

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԱՅՆ, ՈՐ՝

Ա) Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին՝ սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված Ծրագրի նպատակներով վարկի տրամադրման համար,

Բ) Ծրագիրն իրականացնելու են ՏԿԵՆ-ը (ըստ ստորեւ սահմանվածի)՝ որպես կատարման գործակալություն, եւ ՃԴՀ-ն (ըստ ստորեւ սահմանվածի)՝ որպես Ծրագրի իրականացման գրասենյակ, եւ այդ նպատակով Վարկառուն սույն փաստաթղթում սահմանված վարկի միջոցները հասանելի կդարձնի ՃԴՀ-ին՝ ԱԶԲ-ին բավարարող պայմաններով,

Գ) Վարկառուն դիմել է նաեւ Եվրոպական ներդրումային բանկին (ԵՆԲ) վարկ ստանալու խնդրանքով, եւ ակնկալվում է, որ Վարկառուի եւ ԵՆԲ-ի միջեւ կնքվելիք վարկային համաձայնագրով (ԵՆԲ-ի վարկային համաձայնագիր) ԵՆԲ-ն Վարկառուին կտրամադրի իննսունինը միլիոն եվրո (99,000,000 եվրո) (ԵՆԲ վարկ) գումարի չափով վարկ՝ Ծրագրի ծախսերի մի մասի համաֆինանսավորման նպատակներով, եւ

Դ) ԱԶԲ-ն համաձայնել է Վարկառուին վարկ տրամադրել ԱԶԲ-ի սովորական կապիտալի միջոցներից՝ սույն Համաձայնագրում նախատեսված պայմաններով:

ԵԼՆԵԼՈՎ ՎԵՐՈՇԱՐԱԴԻՅԱԼԻՑ՝ կողմերը համաձայնում են հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Վարկավորման կանոններ, սահմանումներ

Բաժին 1.01. ԱԶԲ-ի 2022 թ. հունվարի 1-ի Սովորական գործառնությունների վարկավորման կանոնների (Վարկավորման կանոններ) բոլոր դրույթները սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ սույնով կիրառելի են դառնում նույն ուժով եւ գործողությամբ այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ ձեւակերպված լինեին սույն փաստաթղթում:

Բաժին 1.02. Սույն Վարկային համաձայնագրում գործածվելու դեպքում Վարկավորման կանոններով սահմանված մի շարք եզրույթներ ունեն դրանցում սահմանված համապատասխան նշանակությունը, եթե սույն փաստաթղթում չեն փոփոխվել, կամ եթե համատեքստով այլ բան չի պահանջվում: Սույն Վարկային համաձայնագրում գործածվող լրացուցիչ եզրույթներն ունեն հետեւյալ իմաստը.

ա) «ԿԳԾ» նշանակում է կենսաբազմազանության գործողությունների ծրագիր, ներառյալ՝ կենսաբազմազանության վրա Ծրագրի բացասական ազդեցությունները մեղմելու միջոցառումները, այդ թվում՝ ԲՍԱԳ-ում ներառված դրա ցանկացած թարմացում.

բ) «Բարգուշատի թունել» նշանակում է Սիսիան-Քաջարան ճանապարհի Բարգուշատի թունելի հատվածը, իսկ թունելի այդ հատվածը Ծրագրի մաս չէ.

գ) «Խորհրդատվական ծառայություններ» նշանակում է Գնումների ուղեցույցներում նկարագրված եւ Գնումների պլանում սահմանված խորհրդատվական ծառայություններ, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից.

դ) «Բնապահպանական երաշխիքների մոնիթորինգի հաշվետվություն» նշանակում է Վարկառուի կողմից պատրաստվող եւ ԱԶԲ-ին ներկայացվող յուրաքանչյուր հաշվետվություն, որը նկարագրում է ԲՍԿՊ-ի եւ ԿԳԾ-ի իրականացման առաջընթացը եւ դրանց հետ համապատասխանությունը (ըստ

անհրաժեշտության), ներառյալ՝ ցանկացած ուղղիչ եւ կանխարգելիչ գործողություն.

ե) «ԲՍԱԳ» նշանակում է Սիսիան-Քաջարան ճանապարհի համար բնապահպանական եւ սոցիալական ազդեցության գնահատումը, որը ներառում է Ծրագիրը, ներառյալ՝ դրա ցանկացած թարմացված տարբերակ, որը պատրաստվում եւ ներկայացվում է Վարկառուի կողմից եւ հաստատվում է ԱԶԲ-ի կողմից.

զ) «ԲՍԿՊ» նշանակում է Ծրագրի բնապահպանական եւ սոցիալական կառավարման պլան, ներառյալ՝ ԲՍԱԳ-ում ներառված դրա ցանկացած թարմացված տարբերակ.

է) «Բնապահպանական երաշխիքներ» նշանակում է ԵԲՀ-ի V գլխի 1-ին եւ 4-րդ առդիրներում (ըստ կիրառության) սահմանված սկզբունքներն ու պահանջները.

ը) «ԳԳԳՊ» նշանակում է Ծրագրի համար պատրաստված գենդերային գնահատման եւ գործողությունների պլան, ներառյալ՝ դրա ցանկացած թարմացված տարբերակ, որը համաձայնեցվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ.

թ) «Ապրանքներ» նշանակում է սարքավորումներ եւ նյութեր, որոնք սահմանված են Գնումների պլանում եւ պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից, ներառյալ՝ դրանց առնչվող ցանկացած ոչ խորհրդատվական ծառայություն, ինչպիսիք են փոխադրումը, ապահովագրությունը, տեղադրումը, գործարկումը, վերապատրաստումը եւ նախնական սպասարկումը.

ժ) «Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներ» նշանակում է ԵԲՀ-ի V գլխի 2-րդ եւ 4-րդ առդիրներում (ըստ կիրառության) սահմանված սկզբունքներն ու պահանջները.

ժա) «ՀՕՏԾ» նշանակում է Սիսիան-Քաջարան ճանապարհի համար հողի օտարման եւ տարաբնակեցման ծրագիր, որը ներառում է Ծրագիրը, ներառյալ՝

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

դրա ցանկացած թարմացված տարբերակ, եւ որը պատրաստվում եւ ներկայացվում է Վարկառուի կողմից եւ հաստատվում ԱԶԲ-ի կողմից.

ժբ) «ՀՕՏԾ» (ԱԶԲ-ի բաժին) նշանակում է Ծրագրի համար հողի օտարման եւ տարաբնակեցման ծրագիր, որը ներառում է դրա ցանկացած թարմացված տարբերակ, եւ որը պատրաստվում եւ ներկայացվում է Վարկառուի կողմից եւ հաստատվում ԱԶԲ-ի կողմից.

ժգ) «Վարկի մասհանումների ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ-ի Վարկի մասհանումների ձեռնարկը (2022 թ., պարբերաբար կատարվող փոփոխություններով).

ժդ) «ՏԿԵՆ» նշանակում է Վարկառուի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը.

ժե) «Ոչ խորհրդատվական ծառայություններ» նշանակում է Գնումների ուղեցույցներում նկարագրված եւ Գնումների պլանում սահմանված ոչ խորհրդատվական ծառայություններ, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից.

ժզ) «ՇԵԱ» նշանակում է շահագործում եւ սպասարկում.

ժէ) «ԾԻՁ» նշանակում է Ծրագրի համար Ծրագրի իրականացման ձեռնարկ, որը թվագրված է 2024 թվականի հոկտեմբերի 21-ով եւ համաձայնեցված է Ծրագրի կատարման գործակալության միջոցով Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ, եւ որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի ու ԱԶԲ-ի համապատասխան վարչական ընթացակարգերի համաձայն.

ժը) «Գնումների պլան» նշանակում է Ծրագրի գնումների պլանը, որը թվագրված է 2024 թվականի հոկտեմբերի 21-ով եւ համաձայնեցված է Ծրագրի կատարման գործակալության միջոցով Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ, եւ որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Գնումների քաղաքականության, Գնումների ուղեցույցների եւ ԱԶԲ-ի հետ համաձայնեցված այլ պայմանավորվածությունների համաձայն.

ժթ) «Գնումների քաղաքականություն» նշանակում է ԱԶԲ-ի՝ ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական եւ խորհրդատվական ծառայությունների գնումների քաղաքականությունը (2017թ., պարբերաբար կատարվող փոփոխություններով)։

ի) «Գնումների ուղեցույցներ» նշանակում է ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցները, որոնք նախատեսված են ԱԶԲ-ի Վարկառուների ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական եւ խորհրդատվական ծառայությունների գնումների համար (2017թ., պարբերաբար կատարվող փոփոխություններով)։

իա) «Ծրագրի կատարման գործակալություն» Վարկավորման կանոնների նպատակներով եւ դրանց իմաստով նշանակում է ՏԿԵՆ-ը կամ դրա՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ, որը պատասխանատու է Ծրագրի կատարման համար։

իբ) «Ծրագրի օբյեկտներ» նշանակում է ճանապարհը, կամուրջները, թունելները եւ այլ օբյեկտներ, որոնք պետք է կառուցվեն, իրագործվեն, շահագործվեն եւ սպասարկվեն Ծրագրի շրջանակներում։

իգ) «Ծրագրի իրականացման գրասենյակ» նշանակում է ՃԴՀ կամ դրա՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ, որը Ծրագիրը կիրականացնի որպես իրականացնող գրասենյակ։

իդ) «Ծրագրի ճանապարհ» նշանակում է ճանապարհի հատված, որը նկարագրված է սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածի 2(ա)(i) պարբերությունում։

իե) «ՃԴՀ» նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1298-Ա որոշման համաձայն ստեղծված «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ կամ դրա՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ։

իզ) «Ծառայություններ» նշանակում է խորհրդատվական ծառայություններ եւ ոչ խորհրդատվական ծառայություններ.

իէ) «Սոցիալական երաշխիքների մոնիթորինգի հաշվետվություն» նշանակում է Վարկառուի կողմից պատրաստվող եւ ԱԶԲ-ին ներկայացվող յուրաքանչյուր հաշվետվություն, որը նկարագրում է ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) իրականացման առաջընթացը եւ դրա հետ համապատասխանությունը, ներառյալ՝ ցանկացած ուղղիչ եւ կանխարգելիչ գործողություն.

իը) «ԵԲՀ» նշանակում է ԱԶԲ-ի Երաշխիքների քաղաքականության հայտարարություն (2009 թ.), եւ

իթ) «Աշխատանքներ» նշանակում է շինարարական կամ քաղաքացիական աշխատանքներ, որոնք սահմանված են Գնումների պլանում եւ պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից, ներառյալ՝ դրանց առնչվող ցանկացած ոչ խորհրդատվական ծառայություն եւ ծրագրի հետ կապված ծառայություններ, որոնք մատուցվում են որպես միասնական պատասխանատվությամբ կամ շահագործման համար լիովին պատրաստ (turnkey՝ «բանալու տակ») պայմանագրի բաղկացուցիչ մաս:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Բաժին 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Վարկառուին տրամադրել երկու հարյուր երեսունվեց միլիոն (236,000,000) եվրո վարկ, եւ այդ գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթների համաձայն:

բ) Վարկի մայր գումարի մարման ժամկետը 12.5 տարի է, իսկ արտոնյալ ժամանակահատվածը՝ սույն բաժնի ստորել նշված «գ» ենթակետի համաձայն:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

գ) Սույն բաժնի «բ» ենթակետում գործածված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է մայր գումարի առաջին վճարման օրվան նախորդող ժամանակահատվածը՝ սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված մարման ժամանակացույցի համաձայն:

Բաժին 2.02. Վարկառուն պարբերաբար ԱԶԲ-ին վճարում է տոկոսներ, որոնք հաշվարկվում են առհանված եւ չվճարված վարկի մայր գումարի դիմաց՝ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված այն դրույքաչափով, որը հավասար է հետեւյալի գումարին.

ա) Եվրիբոր,

բ) 0.60%՝ Վարկավորման կանոնների 3.02 բաժնով սահմանված կարգով, հանած 0.10%-ը՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով սահմանված կարգով, եւ

գ) ըստ մարման ժամկետների ապահովագրավճար՝ [0.30%]-ի չափով, ինչպես նախատեսված է Վարկավորման կանոնների 3.03 բաժնով:

Բաժին 2.03. Սույն Վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից սկսած՝ Վարկառուն վճարում է տարեկան 0.15%-ի չափով պարտավորավճար: Այդ վճարը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի վրա (հանած պարբերաբար առհանվող գումարները):

Բաժին 2.04. Վարկի տոկոսագումարը եւ այլ վճարներ կատարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին եւ դեկտեմբերի 15-ին:

Բաժին 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված՝ վարկի մայր գումարը մարում է սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթների համաձայն:

Բաժին 2.06. ա) Պարտքի ողջամիտ կառավարումը դյուրին դարձնելու նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել վարկի հետեւյալ պայմաններում հետեւյալ փոփոխությունները կատարելու խնդրանքով.

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

I. առհանձնված եւ չվճարված կամ չառհանձնված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի արժույթի փոխարինումը հաստատված արժույթով.

II. առհանձնված եւ չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի նկատմամբ կիրառվող բազային տոկոսադրույքի փոփոխումը լողացող դրույքաչափից ֆիքսված դրույքաչափի կամ հակառակը, եւ

III. առհանձնված եւ չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի նկատմամբ կիրառվող լողացող դրույքաչափի սահմանափակումը՝ նշված լողացող դրույքաչափի համար տոկոսադրույքի սահմանային չափը կամ տոկոսադրույքի առավելագույն եւ նվազագույն չափերը (տոկոսային միջանցք) սահմանելու միջոցով:

բ) Վերոնշյալ բաժնի «ա» ենթակետի համաձայն հայցված եւ ԱԶԲ-ի կողմից ընդունելի ցանկացած փոխարկում համարվում է «Փոխարկում»՝ Վարկավորման կանոնների 2.01 բաժնի «ե» կետով սահմանված կարգով, եւ ուժի մեջ է մտնում Վարկավորման կանոնների V հոդվածի դրույթների եւ Փոխարկման ուղեցույցի համաձայն:

Հոդված III

Վարկային միջոցների օգտագործումը

Բաժին 3.01. Վարկառուն պարտավորվում է վարկային միջոցները Ծրագրի կատարման գործակալության համար հասանելի դարձնել ԱԶԲ-ին գոհացնող պայմաններով եւ ապահովում է, որ Ծրագրի կատարման գործակալությունը այդ միջոցներն օգտագործի Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ սույն Վարկային համաձայնագրում սահմանված դրույթներին համաձայն:

Բաժին 3.02. Վարկային միջոցները հատկացվում եւ առհանձնվում են սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթների համաձայն, ընդ որում,

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

այդ հավելվածը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել ԱԶԲ-ի եւ Վարկառուի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

Բաժին 3.03. Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ-ն այլ որոշում է կայացնում, Վարկառուն իրականացնում է կամ ապահովում է Վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա ծախսային հոդվածներով կատարվող գնումները՝ սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածի դրույթների համաձայն:

Բաժին 3.04. Վարկավորման կանոնների 9.02 բաժնի նպատակներով Վարկի փակման օրը 2034 թ. հունիսի 30-ն է կամ այնպիսի այլ ամսաթիվ, որը ժամանակ առ ժամանակ պետք է համաձայնեցվի Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ:

Հոդված IV

Հատուկ պարտավորությունները

Բաժին 4.01. Ծրագիրն իրականացնելիս եւ Ծրագրի օբյեկտները շահագործելիս Վարկառուն կատարում է սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածում սահմանված պարտավորությունները կամ ապահովում է դրանց կատարումը:

Բաժին 4.02. ա) Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի կատարման գործակալությունը՝ i) Ծրագրի համար վարի առանձին հաշիվներ եւ գրառումներ, ii) Ծրագրի համար պատրաստի տարեկան ֆինանսական հաշվետվություններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն, iii) ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտի ստանդարտների համաձայն ապահովի այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտն այնպիսի անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը եւ տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, iv) որպես յուրաքանչյուր այդպիսի աուդիտի մաս ապահովի, որ աուդիտորները պատրաստեն զեկույց, որը ներառում է աուդիտորական եզրակացություն(ներ)ը

Ֆինանսական հաշվետվությունների եւ վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ եւ Ծրագրի կառավարման մասին գրություն (որտեղ սահմանվում են աուդիտի ընթացքում բացահայտված՝ Ծրագրի ներքին հսկողության հետ կապված թերությունները, եթե առկա են), եւ v) յուրաքանչյուր համապատասխան հարկաբյուջետային տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին տրամադրի այդ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների պատճենները, աուդիտորական եզրակացությունը եւ կառավարման մասին գրությունը՝ բոլորը անգլերենով, եւ այդ փաստաթղթերի եւ դրանց աուդիտի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որն ԱԶԲ-ն կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

բ) ԱԶԲ-ն հրապարակում է Ծրագրի՝ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների եզրակացությունը՝ դրանց ընդունելի լինելը ԱԶԲ-ի կողմից հաստատվելուց հետո 14 օրվա ընթացքում՝ դրանք տեղադրելով ԱԶԲ-ի կայքէջում:

գ) Ի լրումն վերելում՝ «ա» ենթաբաժնում նշված՝ տարեկան աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի կատարման գործակալությունը՝ i) տրամադրի իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված ԱԶԲ-ի համար ընդունելի՝ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն, ii) ԱԶԲ-ի կողմից ընդունելի աուդիտի ստանդարտների համաձայն ապահովի այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտն այնպիսի անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը եւ տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, iii) որպես յուրաքանչյուր այդպիսի աուդիտի մաս ապահովի, որ աուդիտորները պատրաստեն զեկույց, որը ներառում է աուդիտորական եզրակացություն(ներ)ը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, եւ iv) համապատասխան մարմնի կողմից աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների եւ աուդիտորական

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

եզրակացության(եզրակացությունների) պատճենները հաստատվելուց հետո ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին տրամադրի այդ պատճենները՝ բոլորը անգլերենով, եւ այդ փաստաթղթերի եւ դրանց աուդիտի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որն ԱԶԲ-ն կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

դ) Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի կատարման գործակալությունը ԱԶԲ-ի պահանջով վերջինիս հնարավորություն ընձեռի վերետու՝ «ա» (iii) եւ «գ» (ii) ենթաբաժինների համաձայն նշանակված աուդիտորների հետ քննարկել Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները եւ Ծրագրի կատարման գործակալության գործունեությունը եւ դրա ֆինանսական խնդիրներն այնքանով, որքանով դրանք առնչվում են Ծրագրին, եւ ապահովում է, որ Ծրագրի կատարման գործակալությունը թույլատրի եւ պահանջի այդ աուդիտորների ցանկացած ներկայացուցչի մասնակցությունը ԱԶԲ-ի պահանջով իրականացվող այդպիսի քննարկումներին: Դա պայմանով, որ այդ քննարկումներն անցկացվեն միայն Ծրագրի կատարման գործակալության լիազորված աշխատակցի ներկայությամբ, եթե Ծրագրի կատարման գործակալությունն այլ համաձայնություն չի տվել:

Բաժին 4.03. Վարկառուն ԱԶԲ-ի ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռում ստուգել Ծրագիրը, Ապրանքները, Աշխատանքները եւ Ծառայությունները, ինչպես նաեւ ցանկացած համապատասխան գրառում եւ փաստաթուղթ:

ՀՈԴՎԱԾ V

Կասեցումը, մարման ժամկետի կրճատումը

Բաժին 5.01. Վարկավորման կանոնների 9.01(Ժգ) բաժնի նպատակներով՝ Վարկի հաշվից առհանումներ կատարելու Վարկառուի իրավունքի կասեցման համար որպես լրացուցիչ պայման սահմանվում է հետեւյալը՝ ԵՆԲ վարկը

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

ենթակա է կասեցման կամ չեղարկման կամ ենթակա է մարման մինչեւ դրա համաձայնեցված մարման ժամկետը:

Բաժին 5.02. Վարկավորման կանոնների 9.07(ա)(iv) բաժնի նպատակներով որպես մարման ժամկետի կրճատման լրացուցիչ պայման սահմանվում է հետեւյալը, եթե տեղի է ունեցել սույն Վարկային համաձայնագրի 5.01 բաժնում նշված հանգամանքը:

ՀՈԴՎԱԾ VI

Ուժի մեջ մտնելը

Բաժին 6.01. Վարկավորման կանոնների 10.01 բաժնի «զ» կետի նպատակներով՝ սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայման են ԵՆԲ վարկային համաձայնագրի պատշաճ ձեւակերպումն ու տրամադրումը եւ այն ուժի մեջ մտնելուն նախորդող բոլոր պայմանների (բացի սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելը պահանջող պայմանից) կատարումը:

Բաժին 6.02. Վարկավորման կանոնների 10.04 բաժնի նպատակներով՝ սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օր է սահմանվում սույն Վարկային համաձայնագիրը կնքելու օրվանից հետո 90-րդ օրը:

ՀՈԴՎԱԾ VII

Այլ դրույթներ

Բաժին 7.01. Վարկավորման կանոնների 12.02-ի բաժնի նպատակներով Վարկառուի ֆինանսների նախարարը նշանակվում է որպես Վարկառուի ներկայացուցիչ:

Բաժին 7.02. Վարկավորման կանոնների 12.01 բաժնի նպատակներով ներկայացվում են հետևյալ հասցեները.

Վարկառուի կողմից՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան փողոց 1

ք. Երեւան, 0010

Հայաստան

Ֆաքս՝ (374 11) 800-132

ԱԶԲ-ի կողմից՝

Ասիական զարգացման բանկ

6 ԱԶԲ պողոտա

քաղաք Մանդալույոնգ

1550 մետրո Մանիլա

Ֆիլիպիններ

Ֆաքս՝ (632) 8636 – 2444

(632) 8636-[]:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Համաձայնագրի կողմերը, հանդես գալով պատշաճ կերպով լիազորված իրենց ներկայացուցիչների միջոցով, իրենց անունից ստորագրեցին սույն Վարկային համաձայնագիրը վերը նշված ամսաթվին եւ տարում, որը պետք է փոխանցվի ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ կողմից
(անունը եւ պաշտոնը)

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

_____ կողմից
(անունը եւ պաշտոնը)

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի նկարագրությունը

1. Ծրագրի նպատակն է բարելավել տարածաշրջանային շարժունակությունը եւ բարձրացնել հասանելիությունը:

2. Ծրագիրը ներառում է՝

ա) Արդյունք 1. կլիմային եւ աղետներին դիմակայուն ճանապարհային կոմունիկացիաների բարելավում՝ i) 27,1 կիլոմետր (կմ) երկարությամբ երկու գոտի ունեցող նոր ճանապարհի կառուցում՝ դանդաղ երթեւեկության համար նախատեսված վերընթաց ուղիներով, կամուրջներով եւ թունելներով. ii) կլիմային դիմակայուն շինարարության մեթոդների, կանաչ ճանապարհների սկզբունքների եւ շահագործման ու սպասարկման լավագույն փորձի ներդրում. եւ iii) կայանատեղիների եւ հանգստի գոտիների բարեկարգման հայեցակարգի մշակում՝ էլեկտրոնային լիցքավորման կայաններով եւ ավտոբուսի կանգառներով, որը ներառում է գեներատային եւ ներառական նախագծման առանձնահատկություններ, եւ կայանատեղիների եւ հանգստի գոտիների կառուցում. եւ

բ) Արդյունք 2. ՃԴՀ-ի կարողությունների բարելավում՝ i) ընդլայնելով ՃԴՀ-ի գիտելիքները խոշոր նախագծերի մշակման եւ իրականացման վերաբերյալ. ii) բարձրացնելով ՃԴՀ-ի գիտելիքները կամուրջների կառավարման համակարգի ստեղծման եւ ճանապարհների սպասարկման գործում. iii) բարելավելով մարդկային ռեսուրսների կառավարման գործելակերպը՝ աջակցելու տեխնիկական պաշտոններում կին անձնակազմի աշխատանքի ընդունմանը, պահպանմանը եւ առաջխաղացմանը. եւ iv) կազմակերպելով ստաժավորման ծրագրեր՝ տեխնիկական մասնագիտացմամբ կին ուսանողների կամ վերջին շրջանավարտների համար՝ աջակցելու կանանց ներկայացվածությանը ճանապարհային ենթակառուցվածքների նախագծման, կառուցման եւ շահագործման գործում:

3. Ծրագիրն ակնկալվում է ավարտել մինչեւ 2033 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Մարման ժամանակացույցը

1. Ստորել բերված աղյուսակում ներկայացվում են Վարկի մայր գումարի վճարման ամսաթվերը եւ մայր գումարի վճարման յուրաքանչյուր օրը վճարման ենթակա՝ վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսները (Վճարման մասնաբաժին): Եթե վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված են, ապա վարկի մայր գումարի վճարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը ԱԶԲ-ի կողմից սահմանվում է՝ բազմապատկելով՝ ա) մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ առհանված եւ չմարված վարկի ընդհանուր մայր գումարը, բ) մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրվա համար Վճարման մասնաբաժինը, իսկ մարման ենթակա այդ գումարը, ըստ անհրաժեշտության, ճշգրտվում է սույն հավելվածի 4-րդ կետում նշված այն գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

<u>Վճարման ամսաթիվը</u>	<u>Վճարման մասնաբաժինը</u> (տոկոսներով արտահայտված)
2036 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2037 թվականի հունիսի 15	4.000000%
2037 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2038 թվականի հունիսի 15	4.000000%
2038 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2039 թվականի հունիսի 15	4.000000%
2039 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2040 թվականի հունիսի 15	4.000000%
2040 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2041 թվականի հունիսի 15	4.000000%
2041 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2042 թվականի հունիսի 15	4.000000%

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

2042 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2043 թվականի հունիսի 15	4.000000%
2043 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2044 թվականի հունիսի 15	4.000000%
2044 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2045 թվականի հունիսի 15	4.000000%
2045 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2046 թվականի հունիսի 15	4.000000%
2046 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2047 թվականի հունիսի 15	4.000000%
2047 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
2048 թվականի հունիսի 15	4.000000%
2048 թվականի դեկտեմբերի 15	4.000000%
Ընդամենը	100.000000

2. Եթե վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա վարկի մայր գումարի վճարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը սահմանվում է հետեւյալ կերպ.

ա) Վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ օրվա դրությամբ առհանված եւ չվճարված գումարը՝ սույն հավելվածի 1-ին կետի համաձայն, եւ

բ) վարկի մայր գումարի առաջին վճարման օրվանից հետո ցանկացած առհանված գումար վերադարձվում է այդ առհանմանը հաջորդող՝ վարկի մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարների չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն հավելվածի 1-ին պարբերության աղյուսակում նշված՝ վարկի մայր գումարի տվյալ վճարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ օրը կամ դրանից հետո ընկնող՝ վարկի մայր գումարի վճարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարն է, ընդ որում, մարման ենթակա այդ գումարները, ըստ անհրաժեշտության, ճշգրտվում են սույն հավելվածի 4-րդ կետում նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրը միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրվան նախորդող 2 օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները համարվում են առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվա դրությամբ առհանված եւ չվճարված եւ ենթակա են մարման՝ առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվանից սկսած մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը:

Հավելված 2

4. Անկախ սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում նախատեսված դրույթներից՝ վարկի մայր գումարի առհանված ամբողջ գումարը կամ դրա մի մասը հաստատված արժույթի փոխարկելու դեպքում նշված հաստատված արժույթի այդ կերպ փոխարկված գումարի չափը, որը ենթակա է մարման Փոխարկման ժամանակահատվածի ընթացքում վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրվա դրությամբ, սահմանվում է ԱԶԲ-ի կողմից՝ նշված փոխարկումից անմիջապես առաջ գործող արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով կա՛մ ա) արժույթի փոխարժեքով, որն արտացոլում է տվյալ փոխարկման հետ կապված արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից վճարվելիք՝ նշված Հաստատված արժույթով մայր գումարները, կա՛մ ii) Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով, եթե ԱԶԲ-ն այդպիսի որոշում կայացնի՝ Փոխարկման ուղեցույցին համապատասխան:

5. Եթե վարկի մայր գումարի առհանված եւ չվճարված մասը պարբերաբար արտահայտվում է Վարկի՝ մեկից ավելի արժույթներով, ապա սույն հավելվածի դրույթները կիրառվում են վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին այնպես, որ յուրաքանչյուր գումարի համար մարման առանձին ժամանակացույց կազմվի:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Վարկային միջոցների հատկացումը եւ առհանումը

Ընդհանուր

1. Սույն հավելվածին կից ներկայացված աղյուսակը սահմանում է Վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա ծախսային հոդվածներով կատարվող գնումների կատեգորիաները եւ յուրաքանչյուր այդպիսի կատեգորիայի համար հատկացվող գումարը (Աղյուսակ): Սույն հավելվածում «Կատեգորիա»-ին կատարված հղումը վերաբերում է Աղյուսակի կատեգորիային կամ ենթակատեգորիային:

Վարկային հաշվից միջոցների առհանման հիմքը

2. Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ-ն այլ համաձայնության է գալիս, Վարկի միջոցները պետք է հատկացվեն ծախսային հոդվածների համար եւ մասհանվեն Աղյուսակում նշված յուրաքանչյուր ծախսային հոդվածի համար առհանման տոկոսի հիման վրա:

Վերաբաշխումը

3. Անկախ վարկային միջոցների հատկացումից եւ Աղյուսակում սահմանված առհանման տոկոսներից՝

ա) եթե որեւէ կատեգորիայի համար հատկացված վարկային միջոցները չեն բավարարում տվյալ կատեգորիայի համաձայնեցված բոլոր ծախսերը ֆինանսավորելու համար, ապա ԱԶԲ-ն կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով՝ i) հաշվարկված պակասող գումարը լրացնելու համար պահանջվող չափով վարկի այն գումարները վերահատկացնել այդ կատեգորիային, որոնք հատկացված են եղել այլ կատեգորիայի համար, սակայն ԱԶԲ-ի կարծիքով՝ անհրաժեշտ չեն այլ ծախսեր ծածկելու համար, եւ ii) եթե այդ վերահատկացումը չի կարող ամբողջովին ծածկել հաշվարկված պակասող գումարը, ապա պետք է նվազեցնել տվյալ ծախսերի առնչությամբ կիրառելի առհանման տոկոսագումարը,

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

որպեսզի տվյալ կատեգորիայի ներքո կատարվող հետազա առհանումները շարունակվեն մինչեւ դրանով նախատեսված բոլոր ծախսերի կատարումը, եւ

բ) եթե վարկի՝ որեւէ կատեգորիայի համար հատկացված գումարը գերազանցում է տվյալ կատեգորիայով համաձայնեցված բոլոր ծախսերը, ապա Վարկառուին համապատասխան ծանուցում ներկայացնելով՝ ԱԶԲ-ն կարող է հավելյալ գումարները վերահատկացնել որեւէ այլ կատեգորիայի:

Մասհանումների ընթացակարգերը

4. Բացառությամբ ԱԶԲ-ի կողմից համաձայնեցված այլ դեպքերի՝ վարկային միջոցները մասհանվում են Վարկի մասհանումների ձեռնարկի համաձայն:

Վարկային հաշվից առհանումների պայմանը

5. Չհակասելով սույն Վարկային համաձայնագրի որեւէ այլ դրույթի՝ Վարկային հաշվից առհանումներ չեն կատարվում, քանի դեռ չեն տրամադրվել ձեւի եւ բովանդակության առումով ԱԶԲ-ի համար բավարար ապացույցներ, որոնք հաստատում են Բարգուշատի թունելի կառուցման ֆինանսավորումը:

ԱՂՅՈՒՍԱԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԵՎ ԱՌՀԱՆՈՒՄ			
Թիվ	Միավոր	ԱԶԲ-ի ֆինանսավորման համար հատկացված ընդհանուր գումար €	Վարկային հաշվից առհանման հիմք
		Կատեգորիա	
1	Ծրագրի ծախսեր (միայն ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող) *	5,323,000	Պահանջված ընդհանուր ծախսերի 83.3%-ը
2	Ծրագրի ծախսեր (ԵՆԲ համաֆինանսավորմամբ) *	199,622,000	Պահանջված ընդհանուր ծախսերի 58.3%-ը
3	Չհատկացված	31,055,000	
	ԸՆԴԱՄԵՆԸ	236,000,000	

* Կատարվում է 3-րդ հավելվածի 5-րդ կետում նկարագրված առհանման պայմանով:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ծրագրի իրականացումը

Իրականացման հետ կապված ընթացակարգերը

1. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն Ծրագրի իրականացումը ԾԻԶ-ում սահմանված մանրամասն ընթացակարգերի համաձայն: ԾԻԶ-ի ցանկացած հետագա փոփոխություն ուժի մեջ է մտնում այդ փոփոխությունը Ծրագրի կատարման գործակալության միջոցով Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից հաստատվելուց հետո միայն: ԾԻԶ-ի եւ սույն Վարկային համաձայնագրի միջեւ ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Վարկային համաձայնագրի դրույթները:

Գնումները

2. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ՝

ա) Ապրանքների, Աշխատանքների եւ Ծառայությունների գնումներն իրականացվեն գնումների քաղաքականության եւ գնումների ուղեցույցների համաձայն.

բ) Ապրանքները, Աշխատանքները եւ Ծառայությունները գնվեն Գնումների պլանով նախատեսված մանրամասն ընթացակարգերի հիման վրա, ներառյալ՝ գնումների եւ ընտրության մեթոդները, մրցութային փաստաթղթերի տեսակը եւ ԱԶԲ-ի կողմից ստուգման պահանջները: Վարկառուն Գնումների պլանով սահմանված մանրամասն ընթացակարգերը կարող է փոփոխել միայն ԱԶԲ-ի նախնական համաձայնությամբ, իսկ այդ փոփոխությունները պետք է սահմանվեն Գնումների պլանի թարմացված տարբերակներում.

գ) ԵՆԲ-ի կողմից համաֆինանսավորվող գնումների փաթեթները Ծրագրի շրջանակներում հնարավոր լինի ձեռք բերել նաեւ ԱԶԲ-ի անդամ չհանդիսացող երկրներից, եւ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

դ) i) գնվող բոլոր Ապրանքները եւ Աշխատանքները եւ ձեռք բերվող Ծառայությունները (այդ թվում՝ համակարգչային ողջ սարքաշարը, ծրագրաշարը եւ համակարգերը, լինեն դրանք առանձին գնված կամ գնված այլ ապրանքների եւ ծառայությունների մեջ ներառված) չխախտեն արդյունաբերական սեփականության կամ մտավոր սեփականության որեւէ իրավունք կամ որեւէ երրորդ կողմի պահանջներ կամ չխոչընդոտեն դրանց. եւ ii) Ապրանքների, Աշխատանքների եւ Ծառայությունների գնման բոլոր պայմանագրերը նախատեսեն համապատասխան հավաստիացումներ, երաշխիքներ եւ ըստ անհրաժեշտության՝ վնասների փոխհատուցման պարտավորություններ կապալառուից, մատակարարից, խորհրդատուից կամ ծառայությունների մատակարարից՝ սույն ենթակետով նախատեսված հարցերի առնչությամբ:

Պայմանագրի շնորհման պայմանները

3. Վարկառուն չպետք է շնորհի եւ պետք է ապահովի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը չշնորհեն Աշխատանքների կատարման այնպիսի պայմանագիր, որը ներառում է շրջակա միջավայրի վրա ազդեցություն, մինչեւ՝

ա) Վարկառուի համապատասխան բնապահպանական մարմինը չտա ԲՍԱԳ-ի վերջնական հաստատումը, իսկ Վարկառուն չստանա ԱԶԲ-ի կողմից ԲՍԱԳ-ի կիրառելի մասերի թույլտվությունը՝ վերջնական նախագծի հիման վրա, եւ

բ) Վարկառուն Աշխատանքների կատարման պայմանագրում չներառի ԲՍԿՊ-ի եւ ԿԳԾ-ի համապատասխան դրույթները:

4. Վարկառուն չպետք է շնորհի եւ պետք է ապահովի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը չշնորհեն Աշխատանքների կատարման այնպիսի պայմանագիր, որը հարկադիր տարաբնակեցման ազդեցություններ է ներառում, մինչեւ Վարկառուն չպատրաստի ու ԱԶԲ-ին չներկայացնի Ծրագրի մանրամասն նախագծի վրա

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

հիմնված՝ վերջնական ՀՕՏԾ (ԱԶԲ-ի բաժին) եւ չստանա այդ ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) վերաբերյալ ԱԶԲ-ի թույլտվությունը:

Աշխատանքների մեկնարկի պայմանները

5. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ բացառությամբ մանրամասն ինժեներական նախագծերում կատարվող ճշգրտումների (եթե այդպիսիք կան) դեպքերի՝ ոչ մի աշխատանք չմեկնարկի՝

ա) Ծրագրով նախատեսված ցանկացած տեղանքում, քանի դեռ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը չեն ստացել Վարկառուի համապատասխան մարմնի հավանությունը՝ բնապահպանական, առողջապահական եւ անվտանգության պահանջվող լիցենզիաների, հաստատումների կամ թույլտվությունների մասով, եւ

բ) Ծրագրով նախատեսված ցանկացած հատվածում (ինչպես այսուհետ սահմանված է ԾԻՁ-ում), որը ներառում է հարկադիր տարաբնակեցման ազդեցություններ, քանի դեռ Վարկառուն չի պատրաստել եւ ԱԶԲ-ին չի ներկայացնել ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) հետ համապատասխանության հաշվետվություն(ներ) եւ ԱԶԲ-ից չի ստացել այդ ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) հետ համապատասխանության հաշվետվության(ների) հաստատումները եւ ԱԶԲ-ին ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) հետ համապատասխանության հաշվետվության միջոցով գրավոր չի ծանուցել այն մասին, որ իրականացվել է համապատասխան խորհրդատվություն, կատարվել են ֆիզիկական եւ/կամ տնտեսական տեսանկյունից պահանջվող բոլոր տեղափոխությունները, բոլոր ազդակիր անձանց տրվել են փոխհատուցումներ եւ հասանելիք այլ վճարներ՝ ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) համաձայն:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

Շրջակա միջավայրը

6. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ Ծրագրի եւ Ծրագրի բոլոր օբյեկտների նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, շահագործումն ու շահագործումից դուրս բերումը համապատասխանեն՝ ա) բնապահպանական, առողջապահական եւ անվտանգության հետ կապված Վարկառուի գործող բոլոր օրենքներին եւ կարգավորումներին, բ) բնապահպանական երաշխիքներին, եւ գ) ԲՍԿՊ-ում եւ ԿԳԾ-ում սահմանված բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, ինչպես նաեւ Բնապահպանական երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությամբ սահմանված ցանկացած ուղղիչ կամ կանխարգելիչ գործողության:

Հողի օտարումը եւ հարկադիր տարաբնակեցումը

7. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ Աշխատանքներ իրականացնող կապալառուների համար հասանելի լինեն Ծրագրի համար անհրաժեշտ բոլոր հողերը եւ հողի անցման իրավունքը՝ Աշխատանքների կատարման համապատասխան պայմանագրով սահմանված ժամանակացույցի համաձայն, իսկ հողի օտարման եւ տարաբնակեցման հետ կապված բոլոր գործողություններն իրականացվեն՝ ա) հողի օտարմանը եւ հարկադիր տարաբնակեցմանն առնչվող՝ Վարկառուի գործող բոլոր օրենքների ու կարգավորումների, բ) հարկադիր տարաբնակեցման երաշխիքների, եւ գ) ՀՕՏԾ-ում (ԱԶԲ-ի բաժին) սահմանված բոլոր միջոցառումների եւ պահանջների, ինչպես նաեւ Սոցիալական երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությամբ սահմանված ցանկացած ուղղիչ կամ կանխարգելիչ գործողության հետ համապատասխանությամբ:

8. Առանց սահմանափակելու հարկադիր տարաբնակեցման երաշխիքների կամ ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) կիրառումը՝ Վարկառուն պետք է

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ Ծրագրի հետ կապված ֆիզիկական կամ տնտեսական ոչ մի տեղափոխություն չիրականացվի, քանի դեռ՝

ա) ՀՕՏԾ-ին (ԱԶԲ-ի բաժին) համապատասխան՝ ազդակիր մարդիկ փոխհատուցում եւ իրենց հասանելիք այլ վճարներ չեն ստացել, եւ

բ) ՀՕՏԾ-ին (ԱԶԲ-ի բաժին) համապատասխան՝ ապրուստի միջոցների եւ եկամտի վերականգնման համապարփակ ծրագիր չի ստեղծվել:

Բնիկ ժողովուրդները

9. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ Ծրագիրը բնիկ ժողովուրդների վրա որեւէ ազդեցություն չունենա ԵԲՀ-ի իմաստով: Այն դեպքում, երբ Ծրագիրը որեւէ նման ազդեցություն ունի, Վարկառուն ձեռնարկում եւ հոգ է տանում, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը ձեռնարկեն բոլոր քայլերը, որոնք անհրաժեշտ են Վարկառուի գործող օրենքներին եւ կարգավորումներին եւ ԵԲՀ-ին՝ Ծրագրի համապատասխանությունն ապահովելու համար:

Մարդկային եւ ֆինանսական ռեսուրսները՝ անվտանգության երաշխիքների պահանջներն իրականացնելու համար

10. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն ֆինանսական եւ մարդկային անհրաժեշտ բոլոր ռեսուրսների հասանելիությունը՝ ԲՍԿՊ-ն, ԿԳԾ-ն, ԲՍԱԳ-ի կիրառելի մասերը եւ ՀՕՏԾ-ն (ԱԶԲ-ի բաժին) ամբողջությամբ իրականացնելու համար:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

Անվտանգության երաշխիքների հետ կապված դրույթները մրցութային փաստաթղթերում եւ Աշխատանքների կատարման պայմանագրերում

11. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ բոլոր մրցութային փաստաթղթերը եւ Աշխատանքների կատարման պայմանագրերը պարունակեն դրույթներ, որոնք կապալառուներից պահանջում են՝

ա) համապատասխանել ԲՍԿՊ-ում, ԿԳԾ-ում, ԲՍԱԳ-ի համապատասխան բաժիններում եւ ՀՕՏԾ-ում (ԱԶԲ-ի բաժին) սահմանված՝ կապալառուներին ներկայացվող համապատասխան պահանջներին (այն չափով, որքանով դրանք շինարարության ընթացքում ներգործում են ազդակիր մարդկանց վրա) եւ ցանկացած ուղղիչ կամ կանխարգելիչ գործողությունների պլաններին, այդ թվում՝ այնպիսիք, որոնք սահմանված են ցանկացած Բնապահպանական երաշխիքների մոնիթորինգի հաշվետվության կամ Սոցիալական երաշխիքների մոնիթորինգի հաշվետվության մեջ.

բ) բնապահպանական եւ սոցիալական այդ միջոցառումների համար բյուջե հատկացնել.

գ) Վարկառուին գրավոր կերպով տեղեկացնել բնապահպանական, տարաբնակեցման կամ բնիկ ժողովուրդներին առնչվող չկանխատեսված ցանկացած ռիսկի կամ ազդեցության մասին, որն ի հայտ է գալիս Ծրագրով նախատեսված շինարարության, աշխատանքների իրականացման կամ շահագործման ժամանակ, եւ որը նախատեսված չի եղել ԲՍԿՊ-ով, ԿԳԾ-ով, ԲՍԱԳ-ի կիրառելի մասերով եւ ՀՕՏԾ-ով (ԱԶԲ-ի բաժին).

դ) մինչեւ նյութերի տեղափոխման ու շինարարության սկիզբը պատշաճ կերպով արձանագրել ճանապարհների, գյուղատնտեսական հողերի եւ այլ ենթակառուցվածքների վիճակը.

ե) շինարարության ավարտից հետո վերականգնել անցուղիները, տեղական այլ ենթակառուցվածքներ եւ գյուղատնտեսական հողերը՝ առնվազն բերելով դրանց նախաշինարարական վիճակի:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

Անվտանգության երաշխիքների մոնիթորինգը եւ հաշվետվողականությունը

12. Վարկառուն պետք է ապահովի կամ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն հետեւյալը.

ա. շինարարության փուլում ԱԶԲ-ին ներկայացնել՝ i) Բնապահպանական երաշխիքների մոնիթորինգի եռամսյակային հաշվետվություններ, այնուհետեւ՝ Բնապահպանական երաշխիքների մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություններ, մինչեւ ԱԶԲ-ն տրամադրի Ծրագրի ավարտական հաշվետվությունը. եւ ii) Սոցիալական երաշխիքների մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություններ, մինչեւ ԱԶԲ-ն տրամադրի Ծրագրի ավարտական հաշվետվությունը եւ այդ հաշվետվությունները ներկայացնելուց անմիջապես հետո հաշվետվությունների համապատասխան տեղեկությունները տրամադրի Ծրագրի ազդակիր անձանց.

բ. եթե Ծրագրով նախատեսված շինարարության, աշխատանքների իրականացման կամ շահագործման ժամանակ ի հայտ են գալիս բնապահպանական եւ/կամ սոցիալական չկանխատեսված ռիսկեր եւ ազդեցություններ, որոնք նախատեսված չեն եղել ԲՍԿՊ-ով, ԿԳԾ-ով, ԲՍԱԳ-ի կիրառելի մասերով եւ ՀՕՏԾ-ով (ԱԶԲ-ի բաժին), ԱԶԲ-ին անմիջապես տեղեկացնել այդ ռիսկերի եւ ազդեցությունների մասին՝ դրանց մանրամասն նկարագրությամբ եւ առաջարկվող ուղղիչ գործողությունների պլանով.

գ. ներգրավել տարաբնակեցման մոնիթորինգի ոլորտում որակավորում ունեցող եւ փորձառու արտաքին փորձագետ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ընտրության ընթացակարգի եւ տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ i) ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) կատարումը հաստատող համապատասխանության հաշվետվություններ պատրաստելու համար (անհրաժեշտության դեպքում առաջնորդվելով որդեգրված ոլորտային մոտեցմամբ). ii) ստուգել Սոցիալական երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությունները եւ անհրաժեշտության դեպքում

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

ուղղիչ գործողություններ առաջարկել. եւ iii) անհրաժեշտության դեպքում պատրաստել համապատասխանության հաշվետվություն(ներ), որը հաստատում է (որոնք հաստատում են) թարմացված ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) ամբողջական իրականացումը, եւ կատարել ԾԻՁ-ով նախատեսված այլ առաջադրանքներ.

դ. ներգրավել բնապահպանական մոնիթորինգի ոլորտում որակավորում ունեցող եւ փորձառու արտաքին փորձագետ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ընտրության ընթացակարգի եւ տեխնիկական առաջադրանքի համաձայն ստուգելու Ծրագրի մոնիթորինգի գործընթացում ստացված տեղեկությունները, եւ նպաստել այդ արտաքին փորձագետների կողմից ստուգմանն առնչվող ցանկացած գործողության իրականացմանը. եւ

ե. ԲՍԿՊ-ում, ԿԳԾ-ում եւ ՀՕՏԾ-ում (ԱԶԲ-ի բաժին) սահմանված միջոցառումներին եւ պահանջներին համապատասխանության ցանկացած փաստացի կամ հնարավոր խախտման մասին տեղեկանալուց անմիջապես հետո հաղորդել դրանց մասին:

Արգելված ներդրումների ցանկը

13. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ վարկային ոչ մի միջոց չօգտագործվի ԵԲՀ-ի 5-րդ առդիրում նախատեսված՝ արգելված ներդրումների ցանկում ներառված որեւէ գործունեություն ֆինանսավորելու համար:

Բողոքների արձագանքման մեխանիզմը

14. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն ԲՍԿՊ-ի, ԿԳԾ-ի, ԲՍԱԳ-ի կիրառելի մասերի եւ ՀՕՏԾ-ի (ԱԶԲ-ի բաժին) դրույթներին համապատասխան՝ ԱԶԲ-ի համար ընդունելի երաշխիքներին առնչվող բողոքների արձագանքման մեխանիզմի ստեղծումը եւ գործառումը՝ երաշխիքներին առնչվող բողոքներն ուսումնասիրելու համար:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

Աշխատանքային ստանդարտները, Առողջության եւ անվտանգության հարցերը

15. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ Ծրագրի իրականացման ընթացքում պահպանվեն հիմնական աշխատանքային ստանդարտները եւ Վարկառուի կիրառելի օրենքներն ու կարգավորումները: Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող Ծրագրի շրջանակներում մրցութային փաստաթղթերում եւ պայմանագրերում ներառվեն հատուկ դրույթներ, որոնք կապալառուներից պահանջում են, ի թիվս այլ պարտավորությունների՝ ա) համապատասխանել Վարկառուի աշխատանքային գործող օրենսդրությանը եւ կարգավորումներին եւ աշխատանքի անվտանգության գործող նորմերը կիրառել աշխատատեղերում. բ) չօգտագործել երեխաների աշխատուժը. գ) աշխատողների նկատմամբ խտրականություն չկիրառել աշխատանքի ընդունման եւ զբաղվածության հարցերում. դ) չկիրառել հարկադիր աշխատանք. ե) թույլատրել միավորումների ազատությունը եւ արդյունավետորեն ճանաչել կոլեկտիվ բանակցությունների իրավունքը. եւ զ) Ծրագրով ներգրավված կապալառուների աշխատողների եւ Ծրագրի իրականացման տարածքին հարակից տեղի համայնքների անդամների, մասնավորապես՝ կանանց համար սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում՝ ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ի ռիսկերի վերաբերյալ տեղեկություններ տրամադրել կամ այդ տեղեկությունները տրամադրելու նպատակով համապատասխան ծառայություններ մատուցողների ներգրավել:

16. Վարկառուն խստագույնս վերահսկում է վերոնշյալ [15]-րդ կետի պահանջներին համապատասխանությունը եւ ԱԶԲ-ին կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում:

Գենդերային հարցերը եւ զարգացումը

17. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ՝ ա) ԳԳԳՊ-ն իրականացվի դրա պայմաններին համապատասխանությամբ, բ) մրցութային փաստաթղթերն ու պայմանագրերը ներառեն կապալառուների համար համապատասխան դրույթներ՝ ԳԳԳՊ-ով սահմանված միջոցառումներին համապատասխանելու համար, գ) ԳԳԳՊ-ի իրականացման համար հատկացվեն համարժեք ռեսուրսներ, եւ դ) ԳԳԳՊ-ի իրականացման ընթացքը, ներառյալ՝ գենդերային հարցերով հիմնական արդյունքների եւ վերջնարդյունքի թիրախների ապահովման ուղղությամբ առաջընթացը, պարբերաբար մշտադիտարկվեն, եւ դրանց մասին զեկուցվի ԱԶԲ-ին:

Համաֆինանսավորման աջակցությունը

18. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ Ծրագրի սահուն եւ արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ամբողջ համաֆինանսավորումը տրամադրվի ժամանակին, ներառյալ՝ ցանկացած լրացուցիչ ֆինանսավորում, որն անհրաժեշտ է ցանկացած միջոցի սղության կամ գերաժախսերի դեպքում: Ի լրումն վերը նշվածի՝ Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ունենան բավարար միջոցներ՝ Աշխատանքների, Ապրանքների եւ/կամ Ծառայությունների ցանկացած պայմանագրից բխող իրենց պարտավորությունները կատարելու համար:

Շահագործումը եւ սպասարկումը

19. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ՝ ա) 2031 թվականից սկսած՝ յուրաքանչյուր ֆինանսական տարում հատկացվեն եւ/կամ ստեղծվեն համարժեք ֆինանսական միջոցներ Ծրագրի օբյեկտների ՇԵԱ-ի

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

համար՝ լավագույն միջազգային ճարտարագիտական եւ Շեւ լիործի համաձայն, եւ
բ) Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման
գրասենյակը Ծրագրի օբյեկտները շահագործեն եւ սպասարկեն՝ հիմնվելով Շեւ
պլանների վրա, որոնք պետք է մշակվեն ոլորտի լավագույն միջազգային Շեւ
գործելակերպերի եւ ուղեցույցների համաձայն:

Գործառնական համաձայնությունները

20. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման
գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ՝ ա)
Ծրագրի օբյեկտները կառուցվեն եւ տեղակայվեն նախագծի տեխնիկական
բնութագրերին, շինարարական մասնագրերին եւ մրցութային փաստաթղթերով
նախատեսված այլ փաստաթղթերի համապատասխան, եւ բ) շինարարության
վերահսկողությունը, որակի վերահսկումը եւ պայմանագրերի կառավարումն
իրականացվեն միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան:

21. Վարկառուն պետք է ապահովի եւ հոգ տանի, որ Ծրագրի կատարման
գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ
Ծրագրի իրականացման ընթացքում եւ դրա ավարտից հետո տեղադրվեն
համապատասխան ճանապարհային անվտանգության նշաններ եւ
սարքավորումներ, ներառյալ՝ նախագգուշացնող նշանները, ճանապարհային
գծանշումները, ճանապարհային նշանները եւ ազդանշանները, կապի միջոցները,
արգելափակոցները եւ երթեւեկության մշտադիտարկման սարքերը, եւ այս ամենը՝
լավագույն միջազգային փորձին եւ համապատասխան միջազգային
կոնվենցիաներին համապատասխան, որոնց կողմ է Վարկառուն:

22. Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագրով նախատեսված
ճանապարհի շահագործման մեկնարկից առնվազն 6 ամիս առաջ՝ i) Ծրագրի
կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը մշակած
եւ իրականացրած լինեն ԱԶԲ-ի համար ընդունելի պլան՝ ճանապարհային
ենթակառուցվածքների օբյեկտների անվտանգ շահագործումն ապահովելու

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի
եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող
տրամադրվել այլ կողմերի:

համար, եւ ii) Վարկառուի համապատասխան մարմիններն ու գերատեսչությունները ոստիկանության համար պատրաստ վիճակի բերեն Ծրագրով նախատեսված ճանապարհը եւ գործողության մեջ դրած լինեն համապատասխան օրենքներն ու կարգավորումները:

23. Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագրով նախատեսված ճանապարհի շահագործման մեկնարկից հետո Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը վերահսկեն Ծրագրով նախատեսված ճանապարհի վրա վթարների մակարդակը եւ երթեւեկության խտությունը եւ ձեռնարկեն անվտանգության ապահովման համապատասխան միջոցներ:

24. Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը համապատասխան գերատեսչությունների միջոցով Ծրագրով նախատեսված ճանապարհի երկայնքով կիրարկեն տրանսպորտային միջոցներից արտանետումների այնպիսի ստանդարտներ, որոնք սահմանված են Վարկառուի համապատասխան օրենքներով եւ կարգավորումներով:

25. Վարկառուն պետք է ապահովի, որ Վարկառուի համապատասխան մարմինները եւ գերատեսչությունները Ծրագրով նախատեսված ճանապարհի երկայնքով իրականացնեն սահմանային խիստ հսկողություն եւ մայրուղային/ճանապարհային պարեկություն՝ մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների եւ ապօրինի նյութերի թրաֆիքինգը կանխելու համար:

26. Վարկառուն ապահովում է եւ հոգ է տանում, որ Ծրագրի կատարման գործակալությանն ապահովի ԱԶԲ-ի գրավոր համաձայնության ստացումը հետեւյալից ցանկացածի իրականացումից առնվազն 6 ամիս առաջ՝ ա) Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած ակտիվի, օբյեկտի կամ շինության սեփականության փոփոխություն, բ) Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած ակտիվի, օբյեկտի կամ շինության վաճառք, փոխանցում կամ ակտիվում ունեցած մասնաբաժնի կամ վերահսկողության փոխանցում, կամ գ) ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

վարձակալության կամ այլ պայմանագիր կամ Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած ակտիվի, օբյեկտի կամ շինության շահագործման եւ պահպանության մասով Ծրագրի կատարման գործակալության գործառույթների եւ լիազորությունների բարելավում: Վարկառուն ապահովում է եւ հոգ է տանում, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ ԱԶԲ-ն անմիջապես տեղեկացվի այդ փոփոխությունն իրականացնելու ցանկացած առաջարկի մասին, եւ ծանուցումը պարունակի այդ փոփոխության վերաբերյալ բավարար մանրամասներ: Վարկառուն ապահովում է եւ հոգ է տանում, որ Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակն ապահովեն, որ ցանկացած այդպիսի փոփոխություն իրականացվի օրինական եւ թափանցիկ եղանակով: Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի կատարման գործակալության եւ Ծրագրի իրականացման գրասենյակի՝ Ծրագրով նախատեսված ճանապարհի շահագործման եւ սպասարկման հետ կապված գործառույթների եւ լիազորությունների ցանկացած փոփոխությունից առնվազն 6 ամիս առաջ ԱԶԲ-ի համաձայնությունն ստացված լինի:

Կառավարումը եւ հակակոռուպցիոն միջոցառումները

27. Վարկառուն, Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը պետք է՝ ա) առաջնորդվեն ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականությամբ (1998թ., մինչ օրս կատարված փոփոխություններով) եւ ընդունեն, որ ԱԶԲ-ին իրավունք է վերապահվում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով հետաքննելու Ծրագրին առնչվող՝ կոռուպցիա, խարդախություն, հանցավոր համաձայնություն կամ հարկադրանք պարունակող ցանկացած ենթադրյալ գործելակերպ, եւ բ) համագործակցեն ցանկացած այդպիսի հետաքննության շրջանակներում եւ տրամադրեն անհրաժեշտ ողջ աջակցությունը՝ այդ հետաքննությունը բավարար կերպով ավարտին հասցնելու համար:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: Այս տեղեկությունները հասանելի են ԱԶԲ-ի ղեկավարության, անձնակազմի եւ/կամ բիզնես խմբերի ընտրված ներկայացուցիչների համար: Առանց պատշաճ թույլտվության դրանք չեն կարող տրամադրվել այլ կողմերի:

28. Վարկառուն, Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակը պետք է ապահովեն, որ ԱԶԲ-ի համար ընդունելի հակակոռուպցիոն դրույթները ներառվեն բոլոր մրցութային փաստաթղթերում եւ պայմանագրերում, ներառյալ՝ այն դրույթները, որոնք սահմանում են Ծրագրի կատարման գործակալության, Ծրագրի իրականացման գրասենյակի եւ բոլոր կապալառուների, մատակարարների, խորհրդատուների ու Ծրագրին առնչվող այլ ծառայությունների մատուցողների փաստաթղթերի եւ հաշիվների աուդիտ իրականացնելու եւ դրանք ուսումնասիրելու ԱԶԲ-ի իրավունքը:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025թ. մարտի 18-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**